

Հաստատված է

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի

«07» դեկտեմբերի 2020 թ., թիվ 148 նիստում

ՀՀ ԳԿՄԿ տնօրեն

----- Ա.Սարգսյան



ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՄԱՍԻ

2019/20 ՈՒՍՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան – 2020 թ.

2019-20 թթ. ուսումնամեթոդական մասն իրականացրել է հետևյալ աշխատանքները.

1. Կրթական ծրագրեր և Բենչմարքինգ

- ❖ ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի մագիստրատուրայում կազմակերպվել է առկա ուսուցմամբ՝ 9 և հեռակա ուսուցմամբ՝ 9 մագիստրոսական ծրագրեր: Շարունակվել են գործընթացները դասընթացների և կրթական ծրագրերի գնահատման առցանց համակարգի գործադրման ուղղությամբ:
- ❖ 2019/2020 ուսումնական տարում լրամշակվել և հաստատվել է մագիստրոսական 3 նոր կրթական ծրագիր: 2019-2020 ուստարում մեկնարկել են՝ 1.Երկրաբանություն, 2. Մոլեկուլային և բջջային կենսաբանություն,3. Շուկայագիտություն (Մարքեթինգ) մագիստրոսական կրթական ծրագրերը, ինչպես նաև լրամշակվել և ՀՀ ԿԳՄՄՆ է ներկայացվել և հաստատվել Կառավարում՝ «Գործարար վարչարարություն» ծրագրով հեռավար կրթություն իրականացնելու իրավունքը:
- ❖ 2019 թվականից անցում կատարվեց դեպի վերջնարդյունքահեն կրթական ծրագրերի մշակմանն ու ներդրմանը: Կենտրոնի բոլոր ամբիոնները վերանայեցին և բարելավեցին համապատասխան ՄԿԾ-երը, այդ թվում՝ ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները **/Հիմք** ուսմասում ամբիոնների տրամադրած փաթեթները/:
- ❖ Յուրաքանչյուր կրթական ծրագրի համար նորացվել են կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույցը և դասընթացների տեղեկագիրքը, որը ներառում է կրթական ծրագրի մասնագիրը և համապատասխան մոդուլ/դասընթացների մանրամասն նկարագրերը: Զգալի աշխատանքներ են տարվել ՄԿԾ-երի մասնագրերում և առարկայական նկարագրերում ակնկալվող ուսումնառության արդյունքների և պետական կրթական չափորոշիչների ու Որակավորումների ազգային շրջանակի հետ համադրելիությունն ապահովելու ուղղությամբ, որի արդյունքում ՄԿԾ-երի մասնագրերը համապատասխանեցվել են Որակավորումների ազգային շրջանակի հետ: **/Հիմք**՝ ամբիոնների կողմից իրականացված մասնագիտության կրթական ծրագրերի առաջավոր փորձի համեմատական վերլուծությունները/:
- ❖ ԳԿՄԿ բոլոր ամբիոնները պարբերաբար իրականացրել և իրականացնում են մասնագիտական կրթական ծրագրերի բենչմարքինգ հայաստանյան և արտերկրի լավագույն փորձի ուսումնասիրման նպատակով: **/Հիմք**՝ ամբիոնների բենչմարքինգի փաթեթները 4 ՄԿԾ-ի օրինակով /:
- ❖ Մշակվել է կրթական ծրագրերի և այլ գործընթացների բենչմարքինգի քաղաքականություն և ընթացակարգ՝ լիարժեք օգտագործելու միջազգային առաջատար փորձը Կենտրոնի ծրագրերը համադրելի դարձնելու արտասահմանյան համալսարաններում իրականացվող համանման ծրագրերի հետ **/Հիմք**՝«ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի բենչմարքինգի (Համեմատական վերլուծության) քաղաքականությունը»:

